ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **05/05/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 6
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմենուհի Առաքելյանը, Կարեն Բաղրամյանը, Հովիկ Գոգոյանը, Յուրա Մանուկյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան, Մարգարիտ Ղազարյան, Գոհար Գոգոյան, Արա Մեսրոպյան, Հայկ Բաբայան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Ռիմա Մանուկյանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝
1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի 2023 թվականի մայիսի 5-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝1) Հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության 2024թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին.

3) Հայատանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր

4) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
5) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին
6) Համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրելու մասին,
7) Համայնքային սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
8)Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերելու մասին.
9) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին/>
10) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և համաֆինանսավորումը ապահովելու համաձայնություն տալու մասին.
11) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 221-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44/

Լսեցին

ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 66 որոշումը և <<ԷՖ ՆԵԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝

<<ԷՖ ՆԵԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել օգտագործել Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 1-ին փողոցի ձախակողմյա հատվածում գտնվող արտաքին լուսավորության 4 հենասյուները՝ գովազդային վահանակներ ամրացնելու նպատակով, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված վճարի դիմաց:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հետևյալ ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝

1) Ծաղկաձոր համայնքի կարիքների համար գրեյդեր մեքենայի ձեռքբերում՝ հավելված 1

2) Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համակցված ճանապարհային մեքենայի ձեռքբերում՝ հավելված 2

3)Ծաղկաձոր համայնքի՝ Ծաղկաձոր բնակավայրի Պահլավունյաց փողոցի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման և մայթերի կառուցման աշխատանքներ՝ հավելված 3.

4) Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցում՝ հավելված 4.

5) Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրի 1-ին փողոցի 2-րդ նրբանցքի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ հավելված 5.

6) Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցում՝ հավելված 6.

7) Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցում՝ հավելված 7

8) Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի 4-րդ փողոցի և 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ՝ հավելված 8:

9) Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում՝ հավելված 9:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ <<ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ,

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 15-րդ կետի , <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> 9-րդ հոդվածի, 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Ծաղկաձոր համայնքում ստեղծել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի <<Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի <<Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1:
3. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի <<Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2:
4. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի <<Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի կազմը՝ համաձայն հավելված 3:
5.Համայնքային սեփականություն հանդիսացող շենքը անհատույց օգտագործման իրավուքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի <<Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 208 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 208 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի << <<Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության և <Արծափ>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 208 որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023թվականի մայիսի 1-ից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 4 րդ ենթակետերով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Նարեկ Մյասնիկի Կեսոյանի դիմումը՝

1. Նարեկ Մյասնիկի Կեսոյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իր ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, 40/6 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0030-0085/ 0.20 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, 40/11 հասցեում գտնվող 0.20 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող տարածքներ հանգստի համար նախատեսված հողամասը:
2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 32 353 200 (երեսուներկու միլիոն երեք հարյուր հիսուն երեք հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-8 Դեմ-3 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. <<Արծափ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրել Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 1985 թվականի արտադրության КО -002 ԶԻԼ АС-5.0 (ЗИЛ-130) մակնիշի ջրատար տրանսպորտային միջոցը:	Դեմ- 0	Ձեռնպահ- 0
2. Համայնքի ղեկավարի հետ կնքել տրանսպորտային միջոցի անհատույց օգտագործման պայմանագիր: Կողմ-11		

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48.1-րդ և 74-րդ, 77-րդ և 78-րդ հոդվածներով՝

Մրցութային կարգով կառուցապատման իրավունքով 30 տարի ժամկետով օգտագործման տրամադրել Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր 1-ին փողոցի թիվ 20/2 հասցեում գտնվող, 0.00351 հա մակերեսով, բնակավայրերի, հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասը՝ տարեկան 35 000 (երեսուն հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ մեկնարկային վարձավճարով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի, 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Հրացան օդային ճնշմամբ ՄՐ 512 տեսակի գույքը /թվով 6 հատ / նվիրաբերել Ծաղկաձոր համայնքի՝ Ծաղկաձոր քաղաքի, <<Զարգանդ Դանիելյանի անվան >> Աղավնաձոր , Արտավազ, Փյունիկ, Մարմարիկ և <<Հակոբ Հակոբյանի անվան>> Մեղրաձոր գյուղերի միջնակարգ դպրոցներին:

2. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

1. Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող՝ գույքը անհատույց մշտական օգտագործման տրամադրել համայնքային ենթակայության ներքոհիշյալ կազմակերպություններին

1) Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի <<Աղավնաձորի նախադրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ հավելված 1:

2) Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի <<Լևոն Գալստյանի անվան նախադրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ հավելված 2:

3) Ծաղկաձոր համայնքի << Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ հավելված 3:

4). Ծաղկաձոր համայնքի <<Արծափ >>համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ հավելված 4:

2. . Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53/

Լսեցին

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<171;ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Ղեկավքարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետի և 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով

1. Համաձայնություն տալ Ծաղկաձոր համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ն/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 221-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի <<Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 221-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Տող 1261 - Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) <<0,0>> թիվը փոխարինել <<180823.9>> թվով:
   2) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ) հոդված <<4222>> (Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) <<2000.0>> թիվը փոխարինել <<5000.0>> թվով:
   3) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ) հոդված <<4239>> (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) <<800.0>> թիվը փոխարինել <<5000,0>> թվով:
   4) Բաժին 1 խումբ 6 դաս 1(Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված <<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<30 000.0>> թիվը փոխարինել <<75 000.0>> թվով:
   5) Բաժին 2 խումբ 2 դաս 1(Քաղաքացիական պաշտպանություն) հոդված <<4269>> (Հատուկ նպատակային այլ նյութեր) <<300.0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:
   6) Բաժին 5 խումբ 2 դաս 1(Կեղտաջրերի հեռացում) հոդված <<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<350 000.0>> թիվը փոխարինել << 469423.9>> թվով:
   7) Բաժին 5 խումբ 2 դաս 1(Կեղտաջրերի հեռացում) հոդված <<5134>> (Նախագծահետազոտական ծախսեր) <<4600.0>> թիվը փոխարինել <<5000.0>> թվով:
   8) Բաժին 8 խումբ 2 դաս 3(Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<5113>> (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) <<24200.0>> թիվը փոխարինել <<40200.0>> թվով:
   9) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված <<4216>> (Գույքի և սարքավորումների վարձակալություն) <<300.0>> թիվը փոխարինել <<4000.0>> թվով:
   10) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված <<4239>> (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) <<3000.0>> թիվը փոխարինել <<5000.0>> թվով:
   11) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՈՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռիմա Մանուկյանը